ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

https://doi.org /10.59982/18294359-23.14.2-ah-08

Աշոտ Գագիկի Հովհաննիսյան
հայցորդ
ՀՀ ԳԱԱ, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ
ashothovhannisyan1998@gmail.com

Ամփոփագիր

Պետության և հասարակության զարգացման պատմական բոլոր փուլերում առավելությունների հիմնական նպատակը և փաստացի գործառույթը կայանում էր առավելությամբ օժտված սուբյեկտի և հասարակ քաղաքացու անհավասար լինելու փաստը ընդգծելու մեջ: Այդ առավելություններն օգնում էին ազնվականների հարուստ դասին ճնշել աղքատների՝ շահագործվողների, դիմադրությունը: 19-րդ դարում սկիզբ առած իրավաքաղաքական մտքի շարունակական զարգացումը հանգեցրեց իրավական առավելությունների նորովի ընկալմանը և արժևորմանը, որի արդյունքում պարզ դարձավ, որ իրավական առավելությունները, որոնք ամրագրված են օրենքով, կարող են և պետք է հետապնդեն իրավաչափ և հանրօգուտ նպատակ, և առանց այդ օրենքով ամրագրված առավելությունների հնարավոր չէ փաստացի հասնել իրավական հավասարության սկզբունքի պատշաճ ապահովմանը, քանի որ այդ իրավական առավելությունները շատ հաճախ ուղղված են անձի, առանձին սոցիալական խմբերի և պետության շահերի համաձայնեցմանը (ներդաշնակեցմանը), ինչպես նաև պետության առջև դրված խնդիրների պատշաճ իրականացման ապահովմանը՝ պաշտպանելով հանրային ծառայողներին բոլոր չհիմնավորված ոտնձգություններից և ստեղծելով նրանց համար բարենպաստ աշխատանքային պայմաններ:

Սույն հետազոտական աշխատանքի մեջ հետազոտության է ենթարկվել «առավելությունը»՝ որպես իրավական հասկացություն և իրավական առավելությունները դասակարգվել են ըստ հետևյալ տեսակների՝ արտոնություններ, առանձնաշնորհություններ և անձեռնմխելիություններ: Միաժամանակ հիմք ընդունելով տրված իրավական առավելությունների տեսակների վերոնշյալ դասակարգումը՝ սույն հետազոտության մեջ անդրադարձ է կատարվել իրավական առավելությունների յուրաքանչյուր տեսակի նպատակներին և գործառույթներին՝ այդ համատեքստում բացահայտելով նաև իրավական առավելությունների վերոնշյալ տեսակների տարբերիչ հատկանիշները:

Ամփոփելով իրականացված հետազոտական աշխատանքը՝ գտնում ենք, որ «առավելության»՝ որպես իրավական հասկացության, նպատակների ու գործառույթների բացահայտումը և մանրակրկիտ ուսումնասիրությունը կնպաստի հայրենական իրավաբանական գրականության մեջ այդ իրավական հասկացության

ճիշտ և տեղին օգտագործմանը և իրավաստեղծ պրակտիկայում իրավաստեղծ պրակտիկայում առավելությունների համաչափ սահմանմանը՝ ելնելով դրանց նպատակներից, միաժամանակ հասարակության համար բացահայտելով «առավելությունների» օրինաչափ նպատակները:

Հիմնաբառեր. առավելություն, իրավունք, արտոնություններ, անձեռնմխելիություն, իմունիտետ, առանձնաշնորհություն:

Ներածություն

Սույն թեմայի արդիականությունը, տեսական և գործնական կարևորությունը կայանում է նրանում, որ հայրենական իրավաբանական գրականության մեջ «իրավական առավելությունները» և դրանց տեսակները՝ որպես իրավական հասկացություններ, բավականին սակավ են ուսումնասիրված: Սակավ են ուսումնասիրված նաև այդ իրավական հասկացությունների տեսակների տարբերությունները: Իրավական առավելությունները մեր հասարակության լայն շերտերում մինչ օրս ընկալվում են որպես բացասական երևույթ, որը պայմանավորված է իրավական առավելությունների, նպատակների և գործառույթների ուսումնասիրված չլինելու հանգամանքով, ուստի այս թեմայի ուսումնասիրությունը կհանգեցնի իրավական առավելությունների և դրանց տեսակների հանրօգուտ նպատակների և գործառույթների բացահայտմանը՝ դրանով իսկ լույս սփռելով այդ հակասական, բայց չափազանց կարևոր և անհրաժեշտ իրավական կարգավորման միջոցներից մեկի՝ իրավական առավելությունների վրա:

Ուստի հետազոտության նպատակն է՝ բացահայտել իրավական առավելությունների և դրանց տեսակների նպատակները և գործառույթները, ինչպես նաև այդ տեսակների նմանություններն ու տարբերությունները՝ նպատակների և գործառույթների համատեքստում:

Աշխատանքի համար տեսական հիմք են հանդիսացել մի շարք հայրենական և արտասահմանյան գիտնականների տարաբնույթ աշխատությունները, միջազգային և ներպետական օրենսդրությունը: Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել համացանցային մի շարք կայքեր և տեղեկատվական այլ աղբյուրներ:

Սույն աշխատության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել ինչպես համագիտական՝ մատերիալիստական, համակարգակառուցվածքային, համեմատական-իրավական, սոցոլոգիական մեթոդները, այնպես էլ տրամաբանական մեթոդները՝ սինթեզը, անալիզը, անալոգիան, ինդուկցիան, դեդուկցիան և մի շարք այլ մեթոդներ:

Իրավական առավելությունների դասակարգումը

Իրավական առավելությունների նպատակներին և գործառույթներին նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ առանձին-առանձին, ըստ դրանց տեսակների, որոնց տարբերակիչ հատկանիշները կբացահայտենք սույն աշխատության մեջ՝ հիմք ընդունելով դրանց նպատակներն ու գործառույթները:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավական առավելությունները կարելի է դասակարգել ըստ հետևյալ տեսակների.

- արտոնություններ
- առանձնաշնորհություններ
- անձեռնմխելիություններ:

Արտոնությունների նպատակները և գործառույթները

Քաղաքացիների առանձին դասերին օրենսդրությամբ վերապահված արտոնությունների գլխավոր նպատակը նրանց փաստացի դրության հավասարեցումն ու որոշակի հարթեցումն է, դրանց կարիքն ունեցող քաղաքացիների բնականոն զարգացման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծումը: Այլ կերպ ասած, արտոնություններ սահմանելիս օրենսդիրը նպատակ է հետապնդում բարելավել առանձին անձանց նյութական կամ բարոյական դրությունը, նրանց շահերի բավարարումը դարձնել առավել արդյունավետ [Малько, Льготы в праве, 46]:

Այսպիսով, մեր կարծիքով, արտոնությունները, ըստ իրենց նպատակների, կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1) Արտոնություններ, որոնք սահմանվում են իրավահավասարության ռեժիմին «ձգտել-հասնելու» նպատակով, եթե սուբյեկտը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով (առողջական վիճակ, տարիք, սեռ և այլն), կամ գտնվում է առանձնահատուկ պայմաններում (կյանքի, աշխատանքի, մասնագիտության):
2) Արտոնություններ, որոնք սահմանվում են գործունեության որևէ տեսակով զբաղվելը խրախուսելու նպատակով, որի մեջ շահագրգռված է պետությունը, պարտականություններից ամբողջությամբ կամ մասնակիորեն ազատելու միջոցով (հարկային արտոնություններ):

Իրավական արտոնությունների ամենաընդհանուր նպատակը կայանում է անձի, առանձին սոցիալական խմբերի, պետությունների շահերի համաձայնեցման (ներդաշնակեցման) մեջ: Արտոնությունները, կարծես փոխկապակցում են այդ տարբեր շահերը, ճկուն կերպով համակցում դրանք՝ հնարավորություն տալով առանց ճնշում գործադրելու բավարարել դրանք՝ բաշխելով սոցիալական բարիքները, և, դրանով իսկ, աջակցելով ինչպես առանձին քաղաքացու, այնպես էլ, ամբողջությամբ վերցրած, հասարակության բնականոն զարգացմանը:

Մի կողմից, արտոնությունները սահմանվում են այն սուբյեկտների համար, որոնց որոշակի շահերը ընդհանուր կանոնների շրջանակներում չեն կարող պատշաճ կերպով

ապահովվել և պաշտպանվել, քանզի դրանք բնութագրվում են յուրահատուկ առանձնահատկություններով (տարիք, առողջական վիճակ, սեռ և այլն), կամ գտնվում են հատուկ պայմաններում (աշխատում են աշխատանքային ծանր պայմաններ ունեցող արտադրամասերում, ունեն այնպիսի մասնագիտություն, որը պահանջում է աշխատանքային օրվա կրճատում, սահմանվածից առավել երկար ամենամյա արձակուրդ և այլն) [Воеводин, 172-174], [Барабашева, Венгеров, 270]:

Մյուս կողմից, արտոնությունները տրամադրվում են այն սուբյեկտներին, որոնց սոցիալապես օգտակար գործունեությամբ շահագրգռված է ինչպես պետությունը, այնպես էլ, ամբողջությամբ վերցրած, հասարակությունը:

Իրավական արտոնությունները, որոնք կոչված են հասնելու այդ ընդհանուր նպատակին, կատարում են փոխհատուցողական և խթանող գործառույթներ: Իրավական արտոնությունների փոխհատուցողական բնույթը կայանում է անհավասար անձանց (կենսաբանական և սոցիալական պատճառներով պայմանավորված) զարգացման համար թեկուզև մոտավոր հավասար հնարավորությունների ստեղծման մեջ: Օրինակ, կույրերի և թույլ տեսողությամբ անձանց ներգրավումը աշխատանքային գործունեության մեջ անհնար կլիներ առանց նրանց համար օրենքով հատուկ աշխատանքային պայմաններ սահմանելու: Հետևաբար, սոցիալական հավասարության սկզբունքն այս պարագայում պահանջում է բացառում իրավահավասարության սկզբունքից, իսկ կույր և թույլ տեսողությամբ մարդկանց վերապահված արտոնությունները տվյալ դեպքում ձեռք են բերում փոխհատուցողական բնույթ՝ դրանով իսկ հավասարեցնելով նրանց հնարավորությունները մյուս մարդկանց հնարավորությունների հետ:

Անժխտելի է նաև այն արտոնությունների փոխհատուցողական բնույթը, որը վերապահվում է պատերազմի հաշմանդամներին, փախստականներին, հարկադրաբար տարաբնակեցվածներին և այլն [Поленина, 16]:

Այս առումով, արտոնությունը, դա հատուկ իրավունք է, որը տրամադրվում է անձին, ի լրումն նրա ունեցած իրավունքների՝ նպատակ ունենալով երաշխավորել սպառման որոշակի մակարդակ, դյուրին դարձնել հաշմանդամության, հղիության, ծննդաբերության, ուսման և աշխատանքի համատեղման և այլնի արդյունքում էականորեն դժվարացած իրավաբանորեն ապահովված բարիքի նկատմամբ հասանելիությունը: Այստեղ, արտոնությունները կոչված են ապահովելու սոցիալ-տնտեսական, նյութական, կենցաղային և ֆինանսական պայմանների բարելավում որոշակի դասերի քաղաքացիների համար:

Այդուհանդերձ, արտոնությունները չպետք է նույնացնել փոխհատուցումների հետ, քանզի մի շարք դեպքերում, բացի փոխհատուցողական գործառույթից, նրանք կատարում են խթանիչ գործառույթ: Դրանք ունակ են հետաքրքրություն առաջացնել հանրօգուտ աշխատանքի առանձին տեսակների նկատմամբ անձի սեփական շահերի բավարարման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով:

Խթանիչ գործառույթներ կոչված են կատարելու առաջին հերթին այն հարկային արտոնությունները, որոնք սահմանվել են արտադրության, ձեռնարկատիրության, ֆերմերային գործունեության, բարեգործական, ներդրումային և այլ գործունեությունների զարգացման նպատակով: Նման գործառույթ արտոնությունները կատարում են այնպիսի իրավաբանական միջոցներով, ինչպիսիք են թույլատրելիությունը, խրախուսումը և այլն: Կարևոր է հաշվի առնել, որ արտոնությունների խթանիչ ուժն ավելին է քան, թույատրելիության ուժը, քանզի արտոնությունը դա լրացուցիչ հնարավորություն, առավելություն է, որը տրվում է «ի լրումն» որևէ իրավունքի, իսկ մյուս կողմից, արտոնությունների խթանիչ ուժը ավելի նվազ է, քան խրախուսման ուժը: Վերջինս, հատուկ կոչված է օրինակելի վարքի խթանման, խրախուսման և պարգևատրման համար: Դա նրա հիմնական գործառույթն է: Արտոնությունը ոչ միշտ է սահմանվում որոշակի վաստակի համար, իսկ խթանիչ գործառույթն առավել չափով իրականացվում է փոխհատուցողական գործառույթի հետ «համատեղ»:

Առանձնաշնորհությունների նպատակները և գործառույթները

Ինչ վերաբերում է առանձնաշնորհությունների նպատակներին, ապա դրանք պետք է սահմանվեն քաղաքացիների վրա դրված հատուկ պետական և հասարակական գործառույթների արդյունավետ իրականացման համար՝ նպատակ հետապնդելով ուժեղացնել նրանց պաշտպանությունը բոլոր չհիմնավորված ոտնձգություններից և ստեղծել նրանց համար բարենպաստ աշխատանքային պայմաններ: Հետևաբար, այդ առանձնաշնորհությունները պետք է հանդես գան բացառապես որպես նախագահի, պատգամավորների, դատավորների, դիվանագետների, իրավապահ և վերահսկող մարմինների պաշտոնատար և այլ անձանց գործառույթների և ծառայողական պարտականությունների որակյալ, անխոչընդոտ իրականացման երաշխիքներ:

Այդուհանդերձ, առանձնաշնորհությունների առանձնահատուկ նպատակն է փորձել հասնելու ինքնատիպ կոմպրոմիսի մի կողմից նեղ պետական կամ կորպորատիվ շահերի միջև, իսկ մյուս կողմից, ամբողջությամբ վերցրած, հասարակության և մասնավորապես նրա սուբյեկտների միջև:

Առանձնաշնորհությունների վերոնշյալ նպատակներին համապատասխանում են նաև նրանց կողմից իրականացվող գործառույթները:

Առանձնաշնորհություններին, որպես համընդհանուր իրավական հասկացության, բնորոշ են հիմնական համընդհանուր իրավական գործառույթներ: Գործնականում այդ գործառույթների իրականացումը կապված է առանձնաշնորհության տեղի և դերի հետ, որը նա զբաղեցնում կամ կատարում է որպես մարդկանց միջև հարաբերությունների պաշտոնաիշխանական կարգավորիչ:

Հետևաբար, բացի այդ գործառույթներից, առանձնաշնորհությունների համար բնորոշ են նաև հատուկ իրավաբանական գործառույթներ, որոնք հստակեցնում են այս կամ այն պատմական իրողության պայմաններում հասարակական

հարաբերությունների որոշակի ոլորտներում առանձնաշնորհությունների կիրառման հարցերը:

Առաջին հերթին, դրանց շարքին են դասվում խթանիչ, փոխհատուցողական, երաշխավորող և բաշխիչ գործառույթները:

Առանձնաշնորհությունների խթանիչ գործառույթը բացատրվում է սուբյեկտի գիտակցության և հոգեբանության վրա քննարկվող իրավաբանական միջոցի ներգործությամբ:

Ընդ որում, անհրաժեշտ է, որպեսզի մարդը ոչ միայն գիտակցի ինչ-որ բանի անհրաժեշտությունը շահի տեսքով, այլ նաև ադեկվատ ձևով ըմբռնի իրավունքի այն նորմերը, որոնց հետ համադրելով սեփական գործողությունները՝ բավարարվում են նրա շահերը:

Սահմանելով լրացուցիչ իրավունքներ կամ ազատելով պարտականություններից, առանձնաշնորհությունները անխուսափելիորեն ընդլայնում են անձի հնարավորությունները՝ դառնալով կարևորագույն խթանիչ ուժ: Այստեղ մեծ նշանակություն ունի որպես առանձնաշնորհություններ հանդես եկող առավելությունների բացառիկությունը, նրանց ոչ այլընտրանքային բնույթը: Կարծում ենք, որ այստեղ առանձնահատուկ դեր է վերագրվում ոչ այնքան նյութական, որքան մի փոքր այլ բնույթի շարժառիթներին, օրինակ՝ պետական կարևորագույն որոշումների կայացմանը անձամբ մասնակցելու կամ որպես դատավոր արդարադատություն իրականացնելու, անմիջականորեն օրենսդրական նախաձեռնության իրավունքին տիրապետելու և նմանատիպ այլ ցանկությունները, հանդիսանում են սուբյեկտների գործունեության կարևորագույն շարժառիթ:

Շարժառիթի առկայությունը պետությանը թույլ է տալիս ներգործել սուբյեկտների վրա՝ ուղղորդելով նրանց դեպի գործունեության այն տեսակները և ուղղությունները, որոնցում պետությունը շահագրգռված է:

Առանձնաշնորհություններին տիրապետելը, այդպիսով, ուղղակի կախվածության մեջ է դրվում պետության կողմից նշված վարքագծին հետևելու հանգամանքից: Այդպիսով, առանձնաշնորհությունները նպաստում են միայն սուբյեկտների այն շահերի բավարարմանը, որոնք միաժամանակ հանդիսանում են սոցիալապես նշանակալի ամբողջ հասարակության և պետության համար: Անձնական և հանրօգուտ շահերի համակցությունը քաղաքական կառավարման բնորոշ գիծն է, որի միջոցներից մեկն է հանդիսանում առանձնաշնորհությունը: Ցանկացած կառավարչական ներգործություն իրենից ենթադրում է օբյեկտի վրա այնպիսի ներգործություն, որը միտված է ամբողջ կառավարչական համակարգի նպատակների իրականցման ապահովմանը [Кудрявцев и др., 101]:

Այսպիսով, քաղաքական վերնախավի նկատմամբ առանձնաշնորհությունների խթանիչ գործառույթը կայանում է նյութական և սոցիալական բարիքի տրամադրման միջոցով արդյունավետ կառավարչական աշխատանքի խթանման մեջ:

Որպես խթան՝ առանձնաշնորհությունների դերը առաջին հերթին կայանում է նրանում, որ իշխանության ներկայացուցիչը, որը մտնում է քաղաքական վերնախավի կազմի մեջ, ձգտի կատարել իր պարտականություններն այնքան բարեխղճորեն, որքան անհրաժեշտ կլինի զբաղցերած պաշտոնին համապատասխանելու համար, որպեսզի նրան օրենքով երաշխավորված լինի իր տեղը քաղաքական վերնախավում, հետևաբար՝ երաշխավորված լինեն այն բոլոր առավելությունները, որոնց նա տիրապետում է:

Առանձնաշնորհությունների երաշխավոր գործառույթը հենց կայանում է այս կամ այն գործունեության ապահովման մեջ: Անձի իրավունքները կարող են երաշխավորվել միայն պետության կողմից, որն ի վիճակի է կառավարել հասարակությունը և դրականորեն ներգործել անձի վրա: Դրա համար պետությունը պետք է տիրապետի բավականին արդյունավետ ձևերի և միջոցների ամբողջության:

Առանձնաշնորհությունների կիրառման առանձնահատուկ ոլորտը և հատուկ նպատակային ուղղվածությունը թույլ են տալիս պնդել այն կարևոր տեղը, որը զբաղեցնում են առանձաշնորհությունները՝ որպես հիմնական իրավունքների և ազատությունների երաշխիք:

Այստեղ, հարկ է միանգամից բացառել առանձնաշնորհությունների՝ որպես ինքնատիպ շահախնդիր շահերի բավարարման բացառիկ միջոցի մասին հարցի շուրջ հասարակության որոշ կարծրատիպեր: Առանձնաշնորհություններն իրականում ենթադրում են բավականին էական բարիքներ: Սակայն, դրանց սահմանումն ինքնանպատակ չէ, այլ միայն ուղեկցող գործոն է, որը բխում է առանձնաշնորհության՝ որպես առավելագույն առավելության, բնույթից: Իրավական առանձնաշնորհությունների կիրառման հիմք է հանդիսանում այն պայմանների ստեղծման բացառիկ և օբյեկտիվ անհրաժեշտությունը, որը նպաստում է գործառնական պարտականությունների օրինաչափ իրականացմանը:

Օրինակ, դատավորին՝ պետական միջոցների հաշվին նրա բարձր կարգավիճակին համապատասխան նյութական և սոցիալական ապահովման տրամադրումը դատավորի անկախության ապահովման երաշխիքներից մեկն է հանդիսանում: Նման առանձնաշնորհությունը հանդիսանում է երկրում իշխանության ինքնուրույն ճյուղի գոյության ոչ պակաս կարևոր գործոն, որը պաշտպանում է քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը՝ ենթարկվելով միայն օրենքին և ներքին համոզմունքին, այլ ոչ թե «համայն աշխարհից ուժեղների» ազդեցությանը և կամքին:

Առանձնաշնորհությունների երաշխավորող բնույթը կայանում է նրանում, որ նրանք «լցնում են» սոցիալական ոլորտը իրական բովանդակությամբ:

Առանձնաշնորհությունները հանդես են գալիս որպես պաշտպանության իրավական, նյութական, սոցիալական միջոցներ, որոնք օրենսդիրներին թույլ են տալիս ցուցաբերել սկզբունքային դիրքորոշում հասարակության և պետության համար կարևորագույն հարցեր լուծելիս:

Առանձնաշնորհությունների փոխհատուցողական գործառույթն առաջին հերթին պայմանավորված է կառավարման գործընթացում խթանների և երաշխիքների հետ միասին այնպիսի առանձնահատուկ իրավաբանական միջոցների օգտագործմամբ, ինչպիսիք են, օրինակ՝ իրավական սահմանափակումները:

Իշխող անձանց համար իրավական սահմանափակումները օրինաչափ սահմանափակումներ են, որոնք նվազեցնում են անձի հնարավորությունների, ազատության և իրավունքների ծավալը՝ ի շահ պետական ապարատի բնականոն գործունեության: ՀՀ օրենսդրությունում նման սահմանափակումների վառ օրինակ են հանդիսանում Աժ պատգամավորների համար սահմանվող պատգամավորական մանդատի հետ անհամատեղելիության պահանջները, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածում:

Հանրային իշխանության տարբեր մակարդակների և ճյուղերի համար սահմանափակումների շրջանակը բավականաչափ լայն ներկայացված է հայրենական օրենսդրության մեջ: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն բոլոր դժվարությունները և բացասական կողմերը, որոնց հետ առնչվում են կառավարիչները. երբեմն ոչ պոպուլյար որոշումների ընդունման պատասխանատվությունը, «արտաժամյա կամ հանգստյան օրերին աշխատելու պարտականությունը, գործուղում գնալու, տեղեկատվության օգտագործման մեջ զգուշավորություն ցուցաբերելու պարտականությունը» [Назаренко, 7]:

Հետևաբար, առանձնաշնորհությունների փոխհատուցողական նշանակությունը կայանում է բացասական հետևանքների հատուցման և, մասնավորապես, քաղաքացիական իրավունքների սահմանափակման մեջ, որոնք հանդիսանում են հանրային իշխանության իրականացման օբյեկտիվ ատրիբուտներ:

Բաշխիչ գործառույթը բնորոշ է առանձնաշնորհություններին այն բանի արդյունքում, որ ինքնին «առանձնաշնորհությունները հանդիսանում են նյութական բարիքների և սոցիալական արժեքների բաշխման ավանդական ձև, որն ընդգրկում է հասարակության մի մասը, առանձնացնում է նրան և որոշում է այդ մասի սոցիալական ատրիբուտները»:

Առանձնաշնորհությունների միջոցով, նորմատիվային եղանակով կատարվում է իշխանության մարմիններում արհեստավարժ գործունեությամբ զբաղվող անձանց ապահովումը, նրանց օժտումը նյութական և այլ առանձնաշնորհություններով և բարիքներով:

Ցանկացած առավելություն այս կամ այն չափով կատարում է վերոնշյալ յուրաքանչյուր գործառնություն:

Իրավական առանձնաշնորհությունների նպատակների և գործառույթների ուսումնասիրությունը և վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել նշված իրավաբանական միջոցի էությունը և սոցիալական նշանակությունը, ցույց տալ առանձնաշնորհության կիրառման և օգտագործման հասարակական նշանակությունը, օբյեկտիվ անհրաժեշտությունը:

Անձեռնմխելիության նպատակները և գործառույթները

Ի տարբերություն արտոնությունների, իրավական անձեռնմխելիության նպատակն է համապատասխան սուբյեկտների կողմից միջազգային, պետական և հասարակական գործառույթների, ծառայողական պարտականությունների կատարման ապահովումը: Այդ բնութագիրը մերձեցնում է իրավական անձեռնմխելիությունները առանձնաշնորհությունների հետ, որոնք, ինչպես արդարացիորեն նշվում է գրականության մեջ, «հիմնականում կողմնորոշված են դեպի քաղաքական վերնախավը, իշխանական մարմիններ և պաշտոնատար անձինք» [Малько, Морозова, 146], «կարող են տարածվել միայն նրանց վրա, ովքեր կանգնած են իշխանության գլուխ և իրականացնում են իշխանությունը» [Власть, демократия, привилегии, 55]:

Քննարկելով անձեռնմխելիության առջև կանգնած նպատակները՝ պետք չէ սակայն բացարձակացնել և գերագնահատել դրանց դերը և նշանակությունը: Իդեալական իրավական պետության պայմաններում, ինչպես կարծում ենք, ոչ մի լրացուցիչ իրավաբանական երաշխիքներ և առավելություններ չեն պահանջվում: Սակայն, իրավական պետության կազմավորումը, ինչպես ճշմարտացիորեն նշում է Մ.Ի.Բայտինը. «երկարատև և բարդ պրոցես է, որը դժվարանում է նրա ապրած ճգնաժամով» [Байтин, 368]: Սույն պրոցեսը պետք է համահունչ կերպով վերապրի նաև հասարակությունը՝ ինքնին հասունանալով դրա համար տնտեսապես, քաղաքականապես, հոգևոր առումով և իրավաբանորեն:

Անձեռնմխելիությունը, որպես ճիշտ և իրական իրավական հասկացություն, միշտ համապատասխանում է որոշակի պատմական փուլում հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններին:

Այդպիսով, անձեռնմխելիությունը այս կամ այն ձևով ոչ բացարձակ, այլ հարաբերական իրավական արժեք է, որը պատասխանում է քաղաքական կյանքի հայտնի պահանջմունքներին և կոչված է որոշակի գործառույթների իրականացմանը, կախված՝ ժամանակի և վայրի պայմաններից:

Մեր կարծիքով, անձեռնմխելիության նման գործառույթների թվին են պատկանում երաշխավորող, խթանող և փոխհատուցողական գործառույթները:

Իրավական անձեռնմխելիությունների երաշխավորող գործառույթն արտահայտվում է նրանում, որ նշված իրավաբանական միջոցն ապահովում է այլ իրավական միջոցների, նախ և առաջ իրավունքների և պարտականությունների, իրականացումը: Այն նպաստում է անձի ոոշակի իրավունքների օրինաչափ և նախաձեռնողական իրականացմանը, ստեղծում է պայմաններ, որոնք այդ իրավունքները դարձնում են իրական, հիմք են ծառայում դրանց օգտագործման հուսալիության համար: Ընդ որում, պետք է պարտադիր կերպով հաշվի առնել, որ անձեռնմխելիությունը երաշխավորում է պետության և ամբողջ հասարակության համար առավել նշանակալի պարտականությունների անխոչընդոտ իրականացում: Ինչպես իրավացիորեն նշում է Գ. Հեգելը. «Քանի որ պատգամավորները ուղարկվում են այն բանի համար, որպեսզի նրանք քննարկեն և լուծեն համընդհանուր գործեր, ապա նրանց ընտրությունն ունի

այնպիսի նշանակություն, որ վստահությամբ են օժտվում այն անհատները, որոնք իրենց լիազորողներից ավելի լավ են հասկանում այդ գործերից, ինչպես նաև այն, որ նրանք պաշտպանում են ոչ թե որևէ հանրության, կորպորացիայի որոշակի շահ՝ հակակշիռ համընդհանուրին, այլ հաստատում են համընդհանուրի նշանակությունը» [Гегель, 347-348]:

Անձեռնմխելիության՝ որպես երաշխիքի, իմաստը կայանում է նրանում, որ այն սահմանում է լրացուցիչ արգելքներ անձին պատասխանատվության ենթարկելու համար և, դրանով, սահմանափակում է նրա վրա հակաիրավական ներգործության հնարավորությունը: Ինչպես հայտնի է, քրեական գործընթացում կարող են կիրառվել հարկադրանքի տարբեր միջոցներ, որոնց հետևանքով կարող է անհնարին դառնալ սուբյեկտի կողմից նրա վրա դրված գործառույթների կատարումը, կամ նրա գործունեության էական սահմանափակումը: Բացի այդ, հնարավոր են սխալներ և չարաշահումներ իրավապահ մարմինների կողմից: Այդ պատճառով, չնայած, որ անձեռնմխելիությունը, որպես պտասխանատվության վրա հասնելու խոչընդոտ, օբյեկտիվորեն ուղղված է ոչ միայն անբարեխիղճ մեղադրանքների, այլ ընդհանրապես քրեական հետապնդումների դեմ, ապա այս կամ այն սուբյեկտների օժտումը դրանցով, որոշակի չափով արդարացված է: Այդ հանգամանքի վրա ուշադրություն է դարձվում և հատուկ գրականության մեջ. «Այսօր, որոշակի դասերի աշխատողների համար դատավարական հարկադրանքի միջոցի չհիմնավորված կիրառման և չհիմնավորված քրեական պատասխանատվության ենթարկման դեմ լրացուցիչ երաշխիքներն անհրաժեշտություն են» [Томин, 148]:

Անձեռնմխելիությունն, այդպիսով, երաշխավորում է հանրօգուտ գործառույթների անարգելք կատարում՝ ապահովելով այդ գործառույթներն իրականացնող սուբյեկտների իրավական անվտանգությունը: Անձեռնմխելիությունը դասվում է անվտանգության միջոցների շարքին, որը անձանց մոտ ստեղծում է վստահության զգացողություն իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս:

Մեր կարծիքով, սոցիալ-քաղաքական և տնտեսական ճգնաժամի պայմաններում, հենց անձեռնմխելիության երաշխավորող գործառույթն է, որ հանդես է գալիս առաջին պլանում և հանդիսանում է գերակայող:

Իր հերթին, խթանող գործառույթը բնորոշ է անձեռնմխելիություններին այն բանի արդյունքում, որ դրանց տիրապետումը անխուսափելիորեն ընդարձակում է հնարավորությունների և ազատությունների ծավալը: Դա ինքին դրդում է սուբյեկտին այնպիսի գործունեության, որը արդարացնում է նրա մոտ բացառիկ առավելությունների առկայությունը:

Այստեղ հարկ է նշել, որ ինքնին անձեռնմխելիության առկայությունը, ցավոք, ոչ միշտ է ընդունակ ձևավորել այնպիսի անձի գիտակցություն, ով օժտված կլինի իր արարքների համար պատասխանատվության բարձր զգացումով: Անձեռնմխելիության խթանող գործառույթն, ինչպես կարելի է եզրակացնել, կայանում է նաև նրանում, որ այն տիրապետող սուբյեկտը, կփորձի բարեխղճորեն և որակյալ կատարել իր

պարտականություններն անձեռնմխելիությունից, հետևաբար՝ բոլոր առավելություններից, որոնք նա ակնկալում է, չզրկվելու նպատակով:

Ըստ Ա.Վ.Մալկոյի, իրավական խթանների նախանշաններից է հանդիսանում այն, որ դրանք ինքնին արտահայտում են դրական իրավական մոտիվացիա [Малько, стимулы и ограничения в праве, 44]:

Դա նշանակում է, որ անձեռնմխելիության օժտումն ուղղակիորեն կախված է վարքի այն ձևի պահպանումից, որը ենթադրում է անձեռնմխելիության տրամադրումը: Այդպիսով, անձեռնմխելիությունը ձևավորում է համընդհանուր բարիքին ուղղված սուբյեկտի վարքի դրական իրավական մոտիվացիա: Շարժառիթի առկայությունը, լրացուցիչ իրավունքներ ստանալու կամ պարտականություններից ազատվելու ձգտումը թույլ է տալիս ուղղորդել անձի վարքը դեպի պետության համար ցանկալի ուղղությամբ: Ինչպես իրավացիորեն նշում է Վ.Ս.Մեռլինը. «Մարդու գործողությունների կառավարումն, ի տարբերություն մեքենայի գործողությունների, կարելի է իրականացնել միայն շարժառիթների կառավարման միջոցով» [Мелин, 5]:

Անձեռնմխելիության փոխհատուցողական գործառույթը պայմանավորված է նրանով, որ սուբյեկտների առանձին դասեր, աշխատանքային և այլ գործառույթների կատարման հետ կապված՝ կարիք ունեն փոխհատուցողական բնույթի արտոնությունների տրամադրման, որպեսզի լրացնեն այն կորուստները, որոնք կրել են իրենց յուրահատուկ գործունեության իրականացման արդյունքում:

Անձեռնմելիությունը, ինչպես արդեն նշվել է, տրամադրվում է բացառիկ կարևոր և բարդ գործառույթների և պարտականությունների իրականացման ժամանակ: Դրանց կատարումն անխուսափելիորեն հանգեցնում է ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական բնույթի մի շարք կորուստների:

Հասարակական և պետական շահերի գերակայությունը անձնական շահերի նկատմամբ, իրավունքների և ազատությունների սահմանափակումն, արդեն իսկ ելնելով արդարության սկզբունքից, պահանջում է փոխհատուցում: Իհարկե, անձեռնմխելիությունն ինքնին առանձնահատուկ փոխհատուցում է, որը կայանում է անձի հատուկ իրավաբանական պաշտպանության մեջ: Սակայն հենց անձեռնմխելիության փոխհատուցողական գործառույթն է, որ թույլ է տալիս չշեղել սուբյեկտին գերբարդ խնդիրների կատարումից՝ ապահովելով նրա անաչառությունը և անկախությունը:

Իրավական անձեռնմխելիության նպատակների և գործառույթների սահմանումը թույլ է տալիս առավել լիարժեք ուսումնասիրել իրավաբանական միջոցի բնույթը, նրա նախանշվածությունը և օգտագործման անհրաժեշտությունը, ինչպես նաև հետագա օպտիմիզացիայի եղանակները:

Եզրակացություն

Անդրադառնալով իրավական առավելությունների յուրաքանչյուր տեսակին և վերլուծելով դրանց տարբերիչ հատկանիշները՝ դրանց նպատակների և գործառույթների համատեքստում, կարող ենք վստահորեն փաստել, որ ժամանակակից հասարակություններում դրանք ունեն կարևոր դերակատարություն, քանի որ այդ իրավական առավելությունները շատ հաճախ ուղղված են անձի, առանձին սոցիալական խմբերի և պետության շահերի համաձայնեցմանը (ներդաշնակեցմանը) և հետապնդում են իրավաչափ և հանրօգուտ նպատակներ, իսկ առանց օրենքներով ամրագրված այդ առավելությունների՝ հնարավոր չէ փաստացի հասնել իրավական հավասարության սկզբունքի պատշաճ ապահովմանը:

Ցավոք, պետք է նշել, որ այս կամ այն դասերի սուբյեկտների համար արտոնություններ, առանձնաշնորհություններ և անձեռնմխելիություններ սահմանող ՀՀ նորմատիվ իրավական ակտերում բացակայում է այդ սուբյեկտներին այս կամ այն առավելություններով օժտելու նպատակների մասին հղումը: Սակայն, ինչպես կարելի է եզրակացնել, դա ավելի շուտ իրավական տեխնիկայի խնդիր է, քան որևէ այլ մոտիվացիա: Ուստի առաջարկում ենք հետագայում այդ նորմատիվ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու կամ այդ ոլորտը կարգավորող նոր իրավական ակտերը ընդունելու դեպքում՝ այդ իրավական ակտերի նախաբանում, ամրագրել որոշակի սուբյեկներին իրավական առավելությունների տեսակ հանդիսացող՝ արտոնություններով, առանձնաշնորհություններով և անձեռնմխելիություններով օժտելու ընդհանրական նպատակները, որի արդյունքում հասարակությանը պարզ կդառնան իրավահավասարության սկզբունքից կատարվող այդ բացառությունների հետապնդած հանրօգուտ նպատակները:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ վերոնշյալ առաջարկը իրականացնելու իրավական հնարավորությունը ներկայումս նույնպես առկա է, մասնավորապես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտը կարող է պարունակել նախաբան, որը սահմանում է իրավական ակտի ընդունման նպատակներն ու պատճառները: Նախաբանը չի շարադրվում առանձին հոդվածով, չի համարակալվում և չի բաժանվում հոդվածների (կետերի): Նախաբանով չեն սահմանվում նորմատիվ դրույթներ» [Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենք]:

Սույն հետազոտական աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ սույն հետազոտական աշխատանքի մեջ հետազոտության է ենթարկվել մի իրավական հասկացություն, որը կարելի է ասել գրեթե ուսումնասիրված չէ հայ իրավաբան-գիտնականների կողմից, մասնավորապես՝ սույն հետազոտական աշխատանքի մեջ հետազոտության է ենթարկվել «առավելությունը»՝ որպես իրավական հասկացություն և իրավական առավելությունները դասակարգվել են ըստ հետևյալ տեսակների՝ արտոնություններ, առանձնաշնորհություններ և անձեռնմխելիություններ: Միաժամանակ հիմք ընդունելով տրված իրավական առավելությունների տեսակների

վերոնշյալ դասակարգումը՝ սույն հետազոտության մեջ անդրադարձ է կատարվել իրավական առավելությունների յուրաքանչյուր տեսակի նպատակներին և գործառույթներին՝ այդ համատեքստում բացահայտելով նաև իրավական առավելությունների վերոնշյալ տեսակների տարբերիչ հատկանիշները, ինչը թե՛ հայրենական իրավաբանական գրականության մեջ, թե՛ իրավաստեղծ և իրավակիրառական պրակտիկայում սովորաբար հաշվի չի առնվում և օգտագործվում է իրավական առավելությունների մեկ ընդհանրական անվանում՝ որևէ կերպ տարբերակում չդնելով «առավելություն», «արտոնություն» և «առանձնաշնորհություն» հասկացությունների միջև:

Ուստի գտնում ենք, որ սույն հետազոտական աշխատանքը կնպաստի նաև հայրենական իրավաբանական գրականության մեջ, իրավաստեղծ և իրավակիրառական պրակտիկայում այդ իրավական հասկացությունների ճիշտ և տեղին օգտագործմանը:

Գրականության ցանկ

1. **Барабашева Н.С., Венгеров А.Б.**, Право и распределения. М., 1988г., с. 279.
2. **Байтин М.И.,** Сущность, права (Современное нормативное понимание права на грани двух веков). Саратов, 2001г., с. 413.
3. **Власть, демократия, привилегии.** Материалы круглого стола // Вопр. Философии., 1991, №7, с. 192.
4. **Воеводин Л.Д.**, Конституционные права и обязанности советских граждан. М., 1972г., с. 300.
5. **Гегель Г. В. Ф.,** Философия права, М. 1990г., с. 526.
6. **Кудрявцев В.Н., Никитский В.И., Самошенко И.С, Глазырин В.В.,** Эффективность правовых норм. М., 1980г., с. 280.
7. **Малько А.В.,** Льготы в праве: Общетеоретический аспект //Правоведение.1996г., № 1, сс. 37-47.
8. **Малько А.В.,** Морозова И.С., Привилегия как специфическая разновидность правовых льгот, Правоведение 1999г. № 4, сс. 143-156.
9. **Малько А.В.,** Стимулы и ограничения в праве: теоретико-информационный аспект. Саратов, 1994г., с. 182:
10. **Мелин В.С.,** Лекции по психологии мотивов человека. Пермь, 1972г., с. 120.
11. **Назаренко А.,** Принципы государственной службы //Народный депутат.1992г., № 2, сс. 6-13.
12. **Поленина С.В.,** Закон как средство рализации задач формирования правового государства» // Теория права, М., 1993г., сс. 13-22.
13. **Томин В.Т.,** Острые углы уголовного судопроизодства, М., 1991г., с. 240.
14. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենք, 05 հոկտեմբերի 2023թ., https://www.arlis.am/

Ashot Hovhannisyan
Researcher
NAS RA, Institute of Philosophy, Sociology and Law
ashothovhannisyan1998@gmail.com

Abstract

In all historical stages of the development of state and society, the main purpose and actual function of the advantages was to emphasize the fact that the privileged subject and the common citizen are unequal. Those advantages helped the wealthy class of nobility suppress the resistance of the poor, exploited people. The unceasing development of legal and political notions that had started in the 19th century led to a new perception and appreciation of legal advantages, as a result of which it became clear that legal advantages envisaged by law can and shall pursue a legitimate purpose of social utility, and without the advantages envisaged by such a law, it is impossible to achieve the proper provision of the principle of legal equality, because those legal advantages are very often aimed at correlation (harmonization) of interests of the person, individual social groups and the state, as well as to ensure the appropriate implementation of tasks assigned to the state, protecting the government employees from all groundless assaults and creating favorable working conditions for them.

In this study, "advantage" was examined as a legal category, and the legal advantages were classified into the following types: benefits, privileges, and inviolabilities. At the same time, based on the aforementioned classification of the types of legal advantages given by the author, in this study, the goals and functions of each type of legal advantage were revisited, identifying the distinguishing features of the above-mentioned types of legal advantages in that context.

Summarizing the research work carried out, we encounter that the identification and careful study of the goals and functions of the "advantage" as a legal category will contribute to the correct and appropriate use of that legal category in national legal literature and the proportional definition of advantages in standard-setting practice based on their goals, while at the same time revealing the legitimate purposes of the “advantages” for the public.

Keywords: advantage, law, benefits, inviolability, privileges.

Ներկայացվել է՝ 09.10.2023թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 20.11.2023թ.